ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՐԶՈՅԱՆ**

2021 թվական, մայիսի 24
Երևան
ԱԺԽՈ-038-Լ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի խորհրդի
2021 թվականի մայիսի 24-ի N ԱԺԽՈ- 038 -Լ որոշման

Ժամկետացանկ

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման

(334 սենյակ)

1. Երեքշաբթի, 1 հունիսի 2021թ., ժ.10.00

ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն (հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ, բյուջետային եկամուտների ձևավորում, հարկային և մաքսային քաղաքականություն, ծախսեր, պակասուրդ),
2. Ֆինանսների նախարարության հաշվետվություն,
3. «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի եզրակացություն,
4. «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացություն,
5. ՀՀ կենտրոնական բանկի 2020թ.վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա.Ջանջուղազյան
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մ.Գալստյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ.Յոլյան

Հրավիրվում են՝ Վարչապետի պաշտոնակատար Ն.Փաշինյանը
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Նարեկ Մկրտչյանը
ԿԵ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս.Մնացականյանը

2. 1. Երեքշաբթի, 1 հունիսի 2021թ., ժ. 13.30
ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (արտակարգ իրավիճակներ, ոստիկանություն):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար Ա.Փիլոյան
ՀՀ ոստիկանության պետ Վ.Ղազարյան

2. 2. Երեքշաբթի, 1 հունիսի 2021թ., ժ.15.00
ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ (նիստը դռնփակ է)

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (պաշտպանության նախարարություն, ազգային անվտանգության ծառայություն և պետական ռեզերվներ):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վ.Հարությունյան
Արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար Ա.Փիլոյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հ.Չորանյան
ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա.Աբազյան

3. Չորեքշաբթի, 2 հունիսի 2021թ., ժ.10.00
ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն (եկամուտների ձևավորում, հարկային և մաքսային քաղաքականություն),
2. «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվությունում եկամուտների և ծախսերի կատարողական (արդյունաբերություն, էներգետիկա և բնական պաշարներ, տրանսպորտ և կապ, տեղեկատվական տեխնոոգիաներ, հանրային ծառայությունների կարգավորում, տնտեսական մրցակցության պաշտպանություն, անշարժ գույքի կադաստրի ոլորտ, քաղաքաշինություն, ջրային տնտեսություն և սակագնային քաղաքականություն)

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաաշտոնակատար Ա.Ջանջուղազյան
ԿԵ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Է. Հովհաննիսյան
Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վ.Քերոբյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար Ս.Պապիկյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հ.Չորանյան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ
Գ. Բաղրամյան
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական
հանձնաժողովի նախագահ Գ.Գևորգյան
ԿԵ կադաստրի կոմիտեի ղեկավար Ս.Թովմասյան
ԿԵ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ա.Ղուլարյան

Հրավիրվում է՝ Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը:

4. Հինգշաբթի, 3 հունիսի 2021թ., ժ.10.00
ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, միջազգային կազմակերպություններին անդամակցելու վճարումներ):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա.Այվազյան

5. Հինգշաբթի, 3 հունիսի 2021թ., ժ.13.00
ՀՀ Ազային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (եվրոպական ինտեգրում):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա.Այվազյան

Հրավիրվում է՝ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վ.Քերոբյան

6. Հինգշաբթի, 3 հունիսի 2021թ., ժ.15.00
ՀՀ Ազգային ժողովի տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (եվրասիական տնտեսական միություն և տարածաշրջանի մյուս երկրների հետ կապեր):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա.Այվազյան
էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վ.Քերոբյան

7. **Ուրբաթ, 4 հունիսի 2021թ., ժ.10.00**
ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (իշխանության պետական և դատական մարմիններ, պետական վերահսկողություն և կոռուպցիայի կանխարգելում):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա.Ջանջուղազյան
Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Է.Տարասյան
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար - գլխավոր քարտուղար Ա.Ավետիսյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա.Թորոսյան
ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Ս.Առաքելյան
ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Կ.Փոլադյան
Արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռ.Բաղասյան
ՀՀ գլխավոր դատախազության գլխավոր քարտուղար Հ.Նավասարդյան
ՀՀ պետական վերահսկողության ծառայության ղեկավար Տ. Ուլիխանյան
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հ.Հարությունյան
ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Հ.Գրիգորյան
ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Ս.Խաչատրյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյան
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տ.Մուկուչյան

8. **Ուրբաթ, 4 հունիսի 2021թ., ժ.16.00**
ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար պաշտոնակատար Ա.Ջանջուղազյան
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյան

9.1. **Երկուշաբթի, 7 հունիսի 2021թ., ժ.10.00**
ՀՀ Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (գյուղատնտեսություն, բնապահպանություն/շրջակա միջավայր):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վ.Քերոբյան
Շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար Ռ.Պետրոսյան

Հրավիրվում է՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար Ս.Պապիկյանը

9.2. Երկուշաբթի, 7 հունիսի 2021թ., ժ.14.00
ՀՀ Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (տարածքային կառավարման մարմիններ, դոտացիաներ համայնքներին, պատվիրակված լիազորությունների իրականացում):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար Ս.Պապիկյան
Երևանի քաղաքապետ Հ.Մարության և մարզպետներ

10. **Երեքշաբթի, 8 հունիսի 2021թ., ժ.10.00**
Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (առողջապահություն, սոցիալական ապահովություն, նպաստներ, թոշակներ):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Առողջապահության նախարարի պաշտոնակատար Ա.Ավանեսյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Նարեկ Մկրտչյան

Հրավիրվում է՝ Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը

11. Երեքշաբթի, 8 հունիսի 2021թ., ժ.14.30
ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն՝ եկամուտների և ծախսերի կատարողական (գիտություն, կրթություն, մշակույթ, սպորտ, սփյուռք, երիտասարդություն և տեղեկատվություն):

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ա. Ջանջուղազյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատար Վ.Դումանյան
ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Տ.Հակոբյան
ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ա.Շիրինյան
Վարչապետի աշխատակազմում սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զ.Սինանյան

Հրավիրվում են՝ Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Ս.Հայոցյանը

12. Մինչև երեքշաբթի, 15 հունիսի 2021թ., համատեղ նիստերից հետո «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության քննարկումների ամփոփումը ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում:

13. Երեքշաբթի, 15 հունիսի 2021թ., ժ.10.00
«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվությունն ընդգրկվում է ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի 2021 թվականի հունիսի 15-ին գումարվող հերթական նիստերի օրակարգում:

Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար Ա. Ավետիսյան